Հավելված 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ
N16 ՀՐԱՄԱՆԻ

Կարգ

/ ՈՒԵՖԱ HatTrick ծրագրով նախատեսված Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի ներդրումային ծրագիրը՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Նաիրյան փողոց թիվ 3 հասցեում գտնվող մարզադաշտի վերակառուցման և դրանից բխող շինարարական աշխատանքների իրականացման համար հայտարարված փակ մրցույթի անցկացման մասին/

I. Մրցույթի կազմակերպիչ՝

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն

II. Մրցույթի անցկացման վայրը և մրցույթային հայտերի ընդունման հասցեն՝

ՀՀ, ք. Երևան, 0010, Խանջյան 27

III. Մրցութային հայտերի ընդունման ժամկետները.

Մրցույթին մասնակցելու համար հայտերը և փաստաթղթերի փաթեթներն ընդունվում են Մրցույթի կազմակերպչի հասցեում ամեն օր, բացի շաբաթ, կիրակի և տոն օրերից, ժամը 10:00 – ից մինչև 18:00: Հայտերի ընդունման վերջնաժամկետն է՝ 2021թ. մարտի 5-ը ժամը 18:00 ներառյալ:

IV. Մրցույթի անցկացման կարգը

1. Գնումն անց է կացվում փակ մրցույթի տեսքով: Մրցույթին մասնակցում են ՀՖՖ կողմից մասնակցության հայտ ստացած և սահմանված ժամկետներում համապատասխան փաստաթղթերը ներկայացրած հետևյալ շինարարական ընկերությունները՝ «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲ ընկերությանը, «Արտշին Պլյուս» ՍՊ ընկերությանը, «Մոնտաժտրանսսշին» ՍՊ ընկերությանը և «Նյու Արմշին» ՍՊ ընկերությունը:

2. **Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթեր և պայմաններ**

2.1. Մրցույթին մասնակցող կազմակերպությունների կողմից ներկայացման ենթակա փաստաթղթերի ցանկ;

- Նամակ-հայտ Մրցույթին մասնակցելու վերաբերյալ, որում առկա են Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություններ (համաձայն հավելված 1-ին կից Ձև 1-ի):
- Առաջարկվող աշխատանքների կատարման նախահաշվային գն(եր)ի (ներառյալ՝ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները), և կատարման ենթակա աշխատանքների ժամկետների վերաբերյալ առաջարկներ:
- Վճարման պայմանները (կանխավճար, վճարման կարգը) և հնարավոր զեղչերի տրամադրման քաղաքականությունը;
- Մրցույթի մասնակցության համար անհրաժեշտ որակավորման (ներառյալ՝ մասնագիտական փորձառություն (համապատասխան լիցենզիայի առկայություն՝ անհրաժեշտության դեպքում), անհրաժեշտ տեխնիկական, ֆինանսական և աշխատանքային միջոցների առկայություն) չափանիշներին բավարարելու վերաբերյալ հայտարարություն (համաձայն հավելված 2-ին կից Ձև 2-ի)
- Կանոնադրության պատճենը (փոփոխություններով):
- Պետական ռեգիստրում գրանցման վկայականի (այդ թվում տվյալ պահին գործող գործադիր մարմնի ղեկավարի վերաբերյալ ներդիրը) կամ պետական ռեգիստրի քաղվածքի պատճենը;
- Իրավաբանական անձի անունից առանց լիազորագրի գործելու իրավունք ունեցող անձի նշանակման վերաբերյալ հիմնադիրների որոշման պատճենը:

2.2. Մրցույթին մասնակցելու իրավունք չունեն այն կազմակերպությունները, որոնք՝

- Նամակ-հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ,
- Արգելվում է՝ ՀՀ հարկային օրենսգրքի իմաստով փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը Մրցմանը:

2.3. Մրցույթի մասնակից կազմակերպությունները Կարգի 2.1. կետով նախատեսված փաստաթղթերը և այլ տեղեկությունները պետք է առձեռն ներկայացնեն գրավոր տարբերակով Մրցույթի կազմակերպչի՝ ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում գտնվող գրասենյակ, մինչև 2021 թվականի մարտի 5-ը ժամը 18:00:

3. **Մրցութային հանձնաժողովի աշխատանքի և մրցույթի հաղթողին որոշելու կարգը.**

- Մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը նշանակվում է 2021թ.-ի մարտի 9-ին, ժամը 11:00 Մրցույթի կազմակերպչի հասցեում:
- Հանձնաժողովի նիստին իրականացվում են մրցույթին մասնակցող հայտերի համադրումն ու գնահատումը, Հանձնաժողովի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ որոշվում է մրցույթի հաղթողը և կազմվում է համապատասխան արձանագրություն:
- Հանձնաժողովի նիստից հետո՝ 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում Մրցույթի կազմակերպիչը Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին առաջարկ է ներկայացնում կնքել համապատասխան պայմանագիր՝ ներկայացնելով անհրաժեշտ նախապայմանները:
- Կողմերի միջև պայմանագրի բոլոր անհրաժեշտ և էական պայմանները համաձայնեցնելուց հետո 1 ամսվա ընթացքում Մրցույթի կազմակերպչի և Մրցույթի հաղթողի միջև կնքվում է Պայմանագիր: